ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ Արմավիրի մարզի Արաքսի համայնքապետարանի աշխատակազմի առաջատար մասնագետի (ծածկագիր 3.1-2) համայնքային ծառայության թափուր պաշտոնի համար

Հայտատու՝ Արաքսի համայնքապետարան

«Համայնքային ծառայության մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդված

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արաքս համայնքի ղեկավարը հայտարարում է մրցույթ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արաքսի համայնքապետարանի աշխատակազմի համայնքային ծառայության հետևյալ թափուր պաշտոնը զբաղեցնելու համար.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԱՔՍԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՌԱՋԱՏԱՐ ՄԱՍՆԱԳԵՏ

(ծածկագիր 3.1-2)

Առաջատար մասնագետը՝

- ✓ կատարում է քարտուղարի հանձնարարությամբ աջակցում է զորակոչի, զորահավաքների, ուսումնավարժական հավաքների իրականացման աշխատանքներին,
- ✓ ապահովում է զինծառայողների հաշվառման փաստաթղթային շրջանառությունը և լրացնում համապատասխան փաստաթղթերը,
- ✓ աշխատակազմի քարտուղարի հանձնարարությամբ իրականացնում է աշխատակազմի առջև դրված գործառույթներից և խնդիրներից բխող իրավական ակտերի, առաջարկությունների, եզրակացությունների և այլ փաստաթղթերի պահպանության և արխիվացման աշխատանքները,
- ✓ իրականացնում է սույն պաշտոնի անձնագրով սահմանված այլ լիազորություններ: Առաջատար մասնագետն ունի օրենքով, այլ իրավական ակտերով նախատեսված իրավունքներ և կրում է այդ ակտերով նախատեսված պարտականություններ:

Նշված թափուր պաշտոնն զբաղեցնելու համար պահանջվում է ունենալ՝

- ✓ առնվազն միջնակարգ կրթություն.
- ✓ ՀՀ Սահմանադրություն, <<Համայնքային ծառայության մասին>>, <<Հանրային ծառայության մասին>>, <<Տեղական ինքնակառավարման մասին>>, <<Իրավական ակտերի մասին>>, <<Զինվորական օրենսգրքի մասին>>, <<Զինծառայողների և նրանց ընտանիքի անդամների սոցիալական ապահովության մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքների, աշխատակազմի կանոնադրության և իր լիազորությունների հետ կապված այլ իրավական ակտերի անհրաժեշտ իմացություն, ինչպես նաև տրամաբանելու, տարբեր իրավիճակներում կողմնորոշվելու ունակություն.
- ✓ համակարգչով և ժամանակակից այլ տեխնիկական միջոցներով աշխատելու ունակություն:

Մրցույթին մասնակցելու իրավունք ունեն ՀՀ քաղաքացիները և Հայաստանի Հանրապետությունում փախստականի կարգավիճակ ունեցող անձինք: Մրցույթին մասնակցելու համար անհրաժեշտ է ներկայացնել հետևյալ փաստաթղթերը՝

ա)գրավոր դիմում հանձնաժողովի անունով՝ նշելով պաշտոնը, որին հավակնում է դիմողը.

բ)համայնքային ծառայության տվյալ պաշտոնի անձնագրով այդ պաշտոնն զբաղեցնելու համար քաղաքացու մասնագիտական գիտելիքների և աշխատանքային ունակությունների տիրապետմանը ներկայացվող պահանջների բավարարումը հավաստող փաստաթղթերի պատճենները՝ ատեստատ(ներ), դիպլոմ(ներ), վկայական(ներ), աշխատանքային գրքույկ (աշխատանքային գրքույկի բացակայության դեպքում՝ տեղեկանք համապատասխան մարմնից).

գ) հայտարարություն այն մասին , որ ինքը չի տառապում Հայաստանի Հանրապետության կառավարության 2011թվականի դեկտեմբերի 15-ի թիվ 1801-Ն որոշմամբ հաստատված ցանկում ընդգրկված հիվանդություններից որևէ մեկով.
դ) հայտարարություն այն մասին, որ ինքը դատական կարգով չի ճանաչվել անգործունակ կամ սահմանափակ գործունակ.

ե)<<Համայնքային ծառայության մասին>> ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի <<ե >>ենթակետի պահանջը բավարարելու նպատակով արական սեռի անձինք ներկայացնում են նաև զինգրքույկի կամ դրան փոխարինող ժամանակավոր զորակոչային տեղամասին կցագրման վկայականի պատճենները կամ համապատասխան տեղեկանք.

զ)մեկ լուսանար(3x4չափսի).

է)անձնագրի պատճենը:

Մրցույթին մասնակցելու համար փաստաթղթերը ներկայացնել անձամբ՝ անձնագրով կամ անձը հաստատող փաստաթղթով: Լրացուցիչ տեղեկություններ ստանալու, ինչպես նաև պաշտոնի անձնագրին և հարցաշարերին ծանոթանալու համար կարող են դիմել Արաքսի համայնքապետարանի աշխատակազմ (հասցե ՝ ՀՀ Արմավիրի մարզ, գյուղ Արաքս, Դրոյի փողոց, թիվ 2 շենք, հեռ.՝ (077)09-08-07 կամ ՀՀ Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի ՏԻՄ-ի և ՀԳՄՀ վարչություն (հասցեն՝ ք,Արմավիր 71, հեռ՝ 2-76-49, 2-07-70) ամեն օր ժամը 9^{00}-ից մինչև 18^{00}՝, բացի շաբաթ,կիրակի և տոն օրերից:

Ներկայացվող փաստաթղթերի պատճենների հետ միասին անհրաժեշտ է ներկայացնել նաև դրանց բնօրինակները:Ներկայացրած փաստաթղթերի պատճենները ետ չեն վերադարձվում:

Մրցույթը կկայանա 2016 թվականի օգոստոսի 31-ին, ժամը 14^{00}-ին:

Դիմումների ընդունման վերջնաժամկետն է օգոստոսի 15 -ը:

Արաքս համայնքի ղեկավար՝/ /Ա.Միքաելյան

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ Արմավիրի մարզի Արաքսի համայնքապետարանի աշխատակազմի գլխավոր մասնագետի (ծածկագիր 2.3-1) համայնքային ծառայության թափուր պաշտոնի համար

Հայտատու՝ Արաքսի համայնքապետարան

«Համայնքային ծառայության մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդված

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արաքս համայնքի ղեկավարը հայտարարում է մրցույթ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արաքսի համայնքապետարանի աշխատակազմի համայնքային ծառայության հետևյալ թափուր պաշտոնը զբաղեցնելու համար.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԱՔՍԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԳԼԽԱՎՈՐ ՄԱՍՆԱԳԵՏ

(ծածկագիր 2.3-1)

գլխավոր մասնագետը՝

- ✓ կազմում է համայնքի բյուջեի նախագիծը,
- ✓ մասնակցում է տեղական տուրքերի և վճարումների դրույքաչափերը սահմանելու վերաբերյալ որոշման նախագծերի նախապատրաստման աշխատանքներին,
- ✓ իրականացնում է հաշվապահական հաշվառման վարման, վճարման, փաստաթղթերի կազմման, ամփոփման և ներկայացման աշխատանքները,
- ✓ աշխատակազմի քարտուղարի հանձնարարությամբ կազմում և ստորագրում է ֆինանսական փաստաթղթերը, աջակցում է հողի հարկերի, վարձավճարների գույքահարկերի գանձման աշխատանքներին,
- ✓ աշխատակազմի քարտուղարի հանձնարարությամբ իրականացնում է աշխատակազմի առջև դրված գործառույթներից և խնդիրներից բխող իրավական ակտերի, առաջարկությունների, եզրակացությունների և այլ փաստաթղթերի պահպանության և արխիվացման աշխատանքները,
- ✓ իրականացնում է սույն պաշտոնի անձնագրով սահմանված այլ լիազորություններ:
  Առաջատար մասնագետն ունի օրենքով, այլ իրավական ակտերով նախատեսված իրավունքներ և կրում է այդ ակտերով նախատեսված պարտականություններ:

Նշված թափուր պաշտոնն զբաղեցնելու համար պահանջվում է ունենալ՝

- ✓ բարձրագույն կրթություն, համայնքային կամ քաղաքացիական պետական ծառայության պաշտոններում առնվազն երկու տարվա ստաժ կամ վերջին երեք տարվա ընթացքում քաղաքական կամ հայեցողական կամ քաղաքացիական պաշտոններում առնվազն մեկ տարվա աշխատանքային ստաժ կամ վերջին ութ տարվա ընթացքում համայնքի ավագանու անդամի աշխատանքային գործունեության առնվազն երկու տարվա փորձ կամ առնվազն երեք տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ, իսկ ներքին աուդիտի ստորաբաժանման ղեկավարի պաշտոնի դեպքում առնվազն երեք տարվա մասնագիտական գործունեության փորձ աուդիտի ոլորտում.

- ✓ ՀՀ Սահմանադրության, <<Համայնքային ծառայության մասին>>, <<Հանրային ծառայության մասին>>, <<Գույքահարկի մասին>>,<<Հողի հարկի մասին>>, <<Հողային օրենսգրքի մասին>>, <<Հարկերի մասին>>, <<Եկամտահարկի մասին>> <<Տեղական տուրքերի և վճարների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքների, աշխատակազմի կանոնադրության և իր լիազորությունների հետ կապված այլ իրավական ակտերի անհրաժեշտ իմացություն, ինչպես նաև տրամաբանելու, տարբեր իրավիճակներում կողմնորոշվելու ունակություն.
- ✓ համակարգչով և ժամանակակից այլ տեխնիկական միջոցներով աշխատելու ունակություն:

Մրցույթին մասնակցելու իրավունք ունեն ՀՀ քաղաքացիները և Հայաստանի Հանրապետությունում փախստականի կարգավիճակ ունեցող անձինք: Մրցույթին մասնակցելու համար անհրաժեշտ է ներկայացնել հետևյալ փաստաթղթերը՝

ա)գրավոր դիմում հանձնաժողովի անունով՝ նշելով պաշտոնը, որին հավակնում է դիմողը.

բ)համայնքային ծառայության տվյալ պաշտոնի անձնագրով այդ պաշտոնն զբաղեցնելու համար քաղաքացու մասնագիտական գիտելիքների և աշխատանքային ունակությունների տիրապետմանը ներկայացվող պահանջների բավարարումը հավաստող փաստաթղթերի պատճենները՝ ատեստատ(ներ), դիպլոմ(ներ), վկայական(ներ), աշխատանքային գրքույկ (աշխատանքային գրքույկի բացակայության դեպքում՝ տեղեկանք համապատասխան մարմնից).

գ) հայտարարություն այն մասին , որ ինքը չի տառապում Հայաստանի Հանրապետության կառավարության 2011թվականի դեկտեմբերի 15-ի թիվ 1801-Ն որոշմամբ հաստատված ցանկում ընդգրկված հիվանդություններից որևէ մեկով.
դ) հայտարարություն այն մասին, որ ինքը դատական կարգով չի ճանաչվել անգործունակ կամ սահմանափակ գործունակ.

ե)<<Համայնքային ծառայության մասին>> ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի <<ե >>ենթակետի պահանջը բավարարելու նպատակով արական սեռի անձինք ներկայացնում են նաև զինգրքույկի կամ դրան փոխարինող ժամանակավոր զորակոչային տեղամասին կցագրման վկայականի պատճենները կամ համապատասխան տեղեկանք.

զ)մեկ լուսանար(3x4չափսի).

է)անձնագրի պատճենը:

Մրցույթին մասնակցելու համար փաստաթղթերը ներկայացնել անձամբ՝ անձնագրով կամ անձը հաստատող փաստաթղթով: Լրացուցիչ տեղեկություններ ստանալու, ինչպես նաև պաշտոնի անձնագրին և հարցաշարերին ծանոթանալու համար կարող են դիմել Արաքսի համայնքապետարանի աշխատակազմ (հասցե ՝ ՀՀ Արմավիրի մարզ, գյուղ Արաքս, Դրոյի փողոց, թիվ 2 շենք, հեռ.՝(077)09-08-07 կամ ՀՀ Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի ՏԻՄ-ի և ՀԳՄՀ վարչություն (հասցեն՝ ք,Արմավիր 71, հեռ՝ 2-76-49, 2-07-70) ամեն օր ժամը 9^{00}-ից մինչև 18^{00}՝,բացի շաբաթ ,կիրակի և տոն օրերից:

Ներկայացվող փաստաթղթերի պատճենների հետ միասին անհրաժեշտ է ներկայացնել նաև դրանց բնօրինակները:Ներկայացրած փաստաթղթերի պատճենները ետ չեն վերադարձվում:

Մրցույթը կկայանա 2016 թվականի օգոստոսի 31-ին, ժամը 12^{00}-ին:

Դիմումների ընդունման վերջնաժամկետն է օգոստոսի 15 -ը:

Արաքս համայնքի ղեկավար՝/ /Ա.Միքաելյան